ԻՆՉՊԵ՞Ս Է ՄՇՏԱԴԻՏԱՐԿՎՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Կոնվենցիան ստեղծել է մշտադիտարկման մեխանիզմ գնահատելու համար, թե ինչպես են նրա դրույթներն իրականացվում գործնականում: Մշտադիտարկման մեխանիզմը կազմված է երկու հենասյուներից. *Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբից* (GREVIO), մի անկախ փորձագիտական մարմին, և Մասնակից պետությունների Կոմիտեից, քաղաքական մի մարմին, որը կազմված է Կոնվենցիայի մասնակից պետությունների պաշտոնական ներկայացուցիչներից: Նրանց եզրակացություններն ու հանձնարարականները կօգնեն ապահովելու երկրների համապատասխանությունը կոնվենցիային և երաշխավորելու դրա երկարաժամկետ արդյունավետությունը:

www.coe.int/conventionviolence
conventionviolence@coe.int

Rems: 084818

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ և ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

ԱՌԱՆՑ ՎԱԽԻ
ԱՌԱՆՑ
ԲՌՆՈՒԹՅԱՆ

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ո՞ՐՆ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան առավել հեռուն գնացող միջազգային պայմանագիրն է՝ հաղթահարելու համար մարդու իրավունքների նման կոպիտ խախտումները: Այն նպատակաուղղված է ամբողջությամբ վերացնելու նման բռնության նկատմամբ հանդուրժողականությունը և մի կարևոր քայլ է Եվրոպան և նրա շրջակա տարածքներն ավելի անվտանգ դարձնելու համար:

Բռնության կանխարգելումը, զոհերի պաշտպանությունը և մեղավորներին դատական հետապնդման ենթարկելը կոնվենցիայի անկյունաքարերն են: Այն նաև նպատակ ունի փոխելու անհատների սրտերն ու մտքերը՝ կոչ անելով հասարակության բոլոր անդամներին, հատկապես տղամարդկանց ու տղաներին, փոխելու իրենց վերաբերմունքը: Ըստ էության, այն մի նոր կոչ է ավելի մեծ հավասարություն հաստատելու համար կանանց և տղամարդկանց միջև, քանի որ կանանց նկատմամբ բռնությունը խորապես արմատացած է կանանց և տղամարդկանց անհավասարության պայմաններում և հավերժացել է անհանդուրժողականության և մերժման մշակույթում:

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան առավել հեռուն գնացող միջազգային պայմանագիրն է՝ հաղթահարելու համար մարդու իրավունքների նման կոպիտ խախտումները: Այն նպատակաուղղված է ամբողջությամբ վերացնելու նման բռնության նկատմամբ հանդուրժողականությունը և մի կարևոր քայլ է Եվրոպան և նրա շրջակա տարածքներն ավելի անվտանգ դարձնելու համար:

Սա առաջին միջազգային պայմանագիրն է, որը տալիս է սեռերի սահմանումը: Դա նշանակում է, որ հիմա համարվում է, որ կանայք և տղամարդիկ ոչ միայն կենսաբանորեն են իգական կամ արական սեռի, այլև գոյություն ունի նաև սոցիալապես ձևավորված գենդերային տեսակ, որը կանանց և տղամարդկանց համար սահմանում է նրանց որոշակի դերերն ու վարքը: Հետազոտությունները ցույց են տվել, որ որոշակի դերերն ու վարքը կարող են նպաստել կանանց նկատմամբ բռնությունն ընդունելի դարձնելուն:

Այն քրեական պատասխանատվություն է սահմանում այնպիսի իրավախախտումների համար, ինչպիսին են սեռական օրգանների խեղումը, հարկադիր ամուսնությունը, հետապնդումը, հարկադրված աբորտները և ստիպողական ստերիլիզացիան: Դա նշանակում է, որ պետություններն առաջին անգամ պետք է պարտավորված լինեն ներառելու այս լուրջ իրավախախտումներն իրենց իրավական համակարգի մեջ:

Այն կոչ է անում բոլոր համապատասխան պետական գործակալություններին և ծառայություններին աշխատել փոխկապակցված այնպես, որ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը քննության առնվեն համակարգված ձևով: Դա նշանակում է, որ գործակալությունները և ՀԿ - ները չպետք է գործեն առանձին, այլ մշակեն համագործակցության արձանագրություններ:

ԻՆՉ ՊԱՀԱՆՋ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

- փոխել վերաբերմունքը, գենդերային դերերը և կարծրատիպերը, որոնք կանանց նկատմամբ բռնությունը դարձնում են ընդունելի,
- պատրաստել զոհերի հետ աշխատող մասնագետներ,
- բարձրացնել իրազեկությունը բռնության տարբեր ձևերի և դրանց տրավմատիկ բնույթի վերաբերյալ,
- ներառել հավասարության խնդիրների շուրջ ուսուցողական նյութերը բոլոր մակարդակների կրթության ուսումնական ծրագրերում,
- համագործակցել ՀԿ-ների, լրատվամիջոցների և մասնավոր հատվածի հետ՝ հանրությանը հասանելի դառնալու համար:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- ապահովել, որպեսզի զոհերի կարիքներն ու անվտանգությունը գտնվեն բոլոր միջոցառումների կենտրոնում,
- ստեղծել մասնագիտացված աջակցության ծառայություններ, որոնք տրամադրում են բժշկական օգնություն, ինչպես նաև հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն զոհերին և նրանց երեխաներին,
- ստեղծել բավարար քանակի ապաստարաններ և տրամադրել անվճար, շուրջօրյա հեռախոսահամարների թեժ գիծ:

ԴԱՏԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

- ապահովել, որպեսզի կանանց նկատմամբ բռնությունը քրեականացվի և համապատասխան կերպով պատժվի,
- ապահովել, որպեսզի մշակույթի, սովորությունների, կրոնի կամ այսպես կոչված «պատվի» հիման վրա բերվող պատճառաբանություններն անընդունելի համարվեն ցանկացած բռնարարքի համար,
- ապահովել, որպեսզի հետաքննության և դատական վարույթների ընթացքում զոհերի համար մատչելի լինեն պաշտպանության հատուկ միջոցները,
- ապահովել, որպեսզի իրավապահ մարմիններն անմիջապես արձագանքեն օգնության կոչերին և համարժեքորեն գործեն վտանգավոր իրավիճակներում:

ՀԱՄԱԼԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ապահովել, որպեսզի վերը բերված բոլոր միջոցները կազմեն համապարփակ և համակարգված քաղաքականության մի ամբողջություն և կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը տան համալիր պատասխան:

ՈՒ՞Մ ՎՐԱ Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

Սույն Կոնվենցիան առանց խտրականության տարածվում է բոլոր կանանց և աղջիկների վրա, անկախ տարիքից, ռասայից, կրոնից, սոցիալական ծագումից, միգրանտի կարգավիճակից կամ սեռական կողմնորոշումից: Կոնվենցիան ընդունում է, որ կան կանանց և աղջիկների խմբեր, որոնք հաճախ ենթարկվում են ավելի մեծ ռիսկերի դառնալու բռնության զոհեր և պետությունները պետք է ապահովեն, որպեսզի նրանց հատուկ կարիքները հաշվի առնվեն: Պետություններին նաև խորհուրդ է տրվում Կոնվենցիան կիրառել և ընտանեկան բռնության այլ զոհերի նկատմամբ, ինչպես օրինակ, տղամարդկանց, երեխաների և տարեցների:

ԻՆՉ Է ՔՐԵԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

Կոնվենցիան դիմում է մասնակից պետություններին քրեականացնել կամ այլ պատժամիջոցներ կիրառել հետևյալ գործողությունների համար.

- ընտանեկան բռնության (ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության),
- հետապնդման,
- սեռական բռնության, ներառյալ բռնաբարության,
- սեռական ոտնձգության,
- հարկադիր ամուսնության,
- կանացի սեռական օրգանների խեղման,
- հարկադրված աբորտների և ստիպողական ստերիլիզացիայի:

Այն հստակ ուղերձ է ուղարկում, որ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը մասնավոր հարցեր չեն: Ընդհակառակը, ընդգծելու համար ընտանիքի ներսում կատարվող հանցագործությունների առանձնահատուկ տրավմատիկ ազդեցությունը, ավելի խիստ պատիժ կարելի է նշանակել հանցագործին այն դեպքում, երբ զոհը նրա կինն է, զուգընկերուհին կամ ընտանիքի անդամը: